

ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ք. Իջևան

14. 12. 2021թ.

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Հ. Մարգարյանը, Գ. Ալեքսանյանը, Գ. Մինասյանը, Ա. Եզանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈԻԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյան, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահին է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Հաղորդում 1-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին: Ժամանակացույցների հաստատման մասին/ Ձեկ. Գ. Ավետիսյան/:
2. 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատման / Ձեկ. Գ. Ավետիսյան/:
3. Հաղորդում 2-րդ կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ/ Ձեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Հաղորդում մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ/ Ձեկ. Մ. Միքայելյան/:

Բաց քվեարկությամբ 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 5/1 → Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.- Հաղորդում 1-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին: Ժամանակացույցների հաստատման մասին/Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում է կազմակերպել ա/թ դեկտեմբերի 21-29 ընկած ժամանակահատվածում: Համապատասխան ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները: Կազմվել է նաև ժամանակացույցերը /կցվում է/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերը:

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում / Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ առաջին կիսամյակի քննաշրջանը կկազմակերպվի ժամանակացույցին համապատասխան՝ հունվարի 12-29-ը: Նա նշեց, որ գրաֆիկը կազմվել է նախապես ուսանողների և դասախոսների հետ

համաձայնեցնելով: Ամբիոնների դասախոսներին հանձնարարվել է սահմանված ժամկետում ներկայացնել քննական տոմսերը:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

3. Լսեցին.- Հաղորդում 2-րդ կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը նշեց, որ մասնագիտական պրակտիկաներն են նախատեսվում Ֆինանսներ ըստ ոլորտի մասնագիտությամբ III և IV կուրսերում: Պրակտիկաները իրականացվելու են ժամանակացույցին համապատասխան: Նա նշեց, որ պրակտիկաների ղեկավարներին անհրաժեշտ է ունենալ վերանայված ծրագրերը՝ փոխհանաձայնեցված պրակտիկայի վայրի ղեկավարների հետ: IV կուրսի ուսանողները արտադրական պրակտիկայի ընթացքում կձևավորեն որոշակի կոմպետենցիաներ, ինչպես նաև ձեռք բերեն տվյալներ, որոնք անհրաժեշտ կլինեն ավարտական աշխատանքները պատշաճ ներկայացնելու համար: III կուրսի ուսանողների արտադրական պրակտիկան միտված կլինի ծանոթանալ կազմակերպությունների կառուցվածքի, փաստաթղթերի հետ, սակայն միևնույն ժամանակ նրանք կարող են որոշակի տվյալներ ձեռք բերեն, որոնք կօտագործեն հետագոտական աշխատանքեր կատարելիս: Ինչպես նաև չորրորդ կուրսում նախըտրելի ավարտական աշխատանքի թեմաներ առաջարկել:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց այն պրակտիկաների ցանկը, որն իրականացվելու է երկրորդ կիսամյակում: Նա նշեց, որ պրակտիկայի արդյունավետ անցկացման համար արդեն իսկ որոշվել է ամբողջ գործիքակազմը: Պրակտիկայի ղեկավարները ունեն իրենց ծրագրերը, որոնք նախապես քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստում: Զբոսաշրջություն մասնագիտությամբ սովորող ուսանողներին

հանձնարարվել է ինքնուրույնաբար ստեղծել իրենց բնակության վայրերի զբոսաշրջային օբյեկտների ներքին ու արտաքին միջավայրերի նկարագրությունն ու դրանց հագեցումը լուսանկարային նկարագրողումներով: Այս կերպ խրախուսվում է պրակտիկայի մասնակցի հետազոտական աշխատանքը՝ միաժամանակ նպաստելով նրա հայրենաճանաչությանը:

Ղեկավարվելով ԵՂՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդումը ընդունել ի գիտություն:

4. Լսեցին.- Հաղորդում մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ/Զեկ. Մ. Միքայելյան/:

Տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ.Միքայելյանը հաղորդեց ֆակուլտետի Ֆինանսներ ըստ ոլորտի ԿԾ մոնիտորինգի հաշվետվության ընթացիկ աշխատանքների մասին: Նա նշեց, մոնիթորինգի հաշվետվության մեջ անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին.ԿԾ-ի վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքներն են, շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքներն են, ծրագրի շահակիցների արձագանքը, համագործակցային կապերը, ծրագրի փոփոխությունները, ծրագրի վերանայման և արտաքին գնահատման արդյունքները, որոնց իրականացման համար բաշխվել են աշխատանքային խմբի ադամների միջև:

Ըստ բավարարվածության ասիճանի Մ. Միքայելյանը նշեց, որ ուսանողական հարցման (56-ից մասնակցել են 26-ը՝ 46.4 %-ը) արդյունքներից պարզվել է, որ նրանց 73 %-ն է տեղյակ՝ ի՞նչ մասնագետ է դառնալու, իսկ 27 %-ը՝ մասամբ: Մտահոգություն հայտնեց գրադարանում առկա մասնագիտական գրականության քանակից և դրա որակից: (Ֆինանսներ ԿԾ հարցվածների, համապատասխանաբար՝ 35 և 38 %-ը, իսկ մասնաճյուղի միջին ցուցանիշները, համապատասխանաբար՝ 33 և 59 %):

Ուսանողները գոհ են ընթերցասրահի սպասարկումից (73 %): Ուսանողների հարցման արդյունքների վրա բացասական ազդեցություն են թողել, և հարցման մասնակիցների ցածր տոկոսը, որը հնարավոր է արժանահավատ տեղեկատվություն չպարունակի, և համավարակը (ի դեպ այս գործոնը էական բացասական ազդեցություն է թողել նաև այլ ցուցանիշների վրա): Շրջանավարտների հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնառությունը լիարժեք չի նպաստել մասնագիտական կարողությունների ու գործնական հմտությունների ձևավորմանը և օտար լեզուների իմացության ապահովմանը: Ավարտական աշխատանքների կազմակերպումն ու գնահատումն էլ այնքան գոհացուցիչ չի եղել: Մ. Միքայելյանը նշեց նաև հարցում է իրականացվել արտաքին շահակիցների շրջանում և ըստ նրանց մեր ուսանողների գիտելիքներն ու կարողությունները գնահատվել են 2-3 միավոր:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ ԿՕ ընթացիկ մոնիթորինգ իրականացնող խմբի աշխատանքները գնահատել բավարար:

***Գիտական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝***

***Գ. Ավետիսյան
Ա. Ալեքսանյան***